ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի քարտուղարություն՝
Հասցե՝ Հայաստան, 0070, Երևան, Այգեստան թաղամաս, 5-րդ փողոց, 3/1 տուն
Հեռ՝ (+37410) 517528; **Էլ. հասցե՝** hartak@sdaoffice.am

ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի 7-րդ աշխատաժողովի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2020 թվականի հունիսի 9-ին MS Teams համակարգի միջոցով առցանց տեղի ունեցավ ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի (այսուհետ՝ Հարթակ) 7-րդ աշխատաժողովը, որը նվիրված էր Հարթակի ընթացիկ գործունեության և տարեկան աշխատանքային պլանի քննարկմանը, ինչպես նաև ոլորտում նոր ձեռքբերումների ներկայացմանը:

Աշխատաժողովի օրակարգը՝

Ժամ	*Թեմա*
14:00 - 15:00	**Մասնակիցների գրանցում** Միացում առցանց հարթակին
15:00 - 15:20	**Ողջույնի խոսք, օրակարգի և մասնակիցների ներկայացում**
15:20 - 15:35	**Հարթակի 2020թ աշխատանքային պլանի ներկայացում և քննարկում** *Ներկայացնող՝ Կ. Այվազյան, Ռազմավարական զարգացման գործակալություն ՀԿ* Առաջարկություններ, հարց ու պատասխան
15:35 - 16:05	**«ՀՀ արոտների կայուն կառավարման հայեցակարգի» ներկա կարգավիճակը և դրա հետ կապված հետագա քայլերը** *Ներկայացնող՝ Կ. Թորոսյան, ՀԳՌԿՄ-2 ծրագիր* Առաջարկություններ, հարց ու պատասխան
16:05 – 16:25	**«Դեգրադացված բնական կերհանդակների (արոտավայրերի և խոտհարքների) բարելավման ուղեցույց» ձեռնարկի ներկայացում** *Ներկայացնող՝ Գ. Թովմասյան, Բնական ռեսուրսների կառավարման փորձագետ* Հարց ու պատասխան
16:25 - 16:40	**Միջոցառման ամփոփում, հետագա քայլերի ներկայացում**

Հանդիպման մասնակիցները՝

1. Դավիթ Մեժլումյան – ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն (ԷՆ)
2. Կարեն Թորոսյան – ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն (ԷՆ)
3. Աշոտ Գիլոյան – ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (ՏԿԵՆ)
4. Հռիփսիմե Բաբայան – ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (ՏԿԵՆ)
5. Աշոտ Վարդևանյան – ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն (ՇՄՆ)
6. Նորա Ալանակյան – Ավստրիայի զարգացման գործակալություն
7. Կարեն Մանվելյան – Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան գրասենյակ
8. Հրաչյա Զաքոյան – Հայաստանի Ազգային Ագրարային Համալսարան (ՀԱԱՀ)
9. Կարինա Հարությունյան – Ռազմավարական զարգացման գործակալություն (ՌԶԳ) ՀԿ
10. Վիկտորյա Այվազյան – Ռազմավարական զարգացման գործակալություն (ՌԶԳ) ՀԿ
11. Վարդան Համբարձումյան – Ռազմավարական զարգացման գործակալություն (ՌԶԳ) ՀԿ
12. Վահե Հովհաննսիյան – Ռազմավարական զարգացման գործակալություն (ՌԶԳ) ՀԿ
13. Գագիկ Թովմասյան – Ռազմավարական զարգացման գործակալություն (ՌԶԳ) ՀԿ, ՀԱԱՀ
14. Աստղիկ Դանիելյան – Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (ԳՄՀԸ)
15. Աղասի Մնացյան – Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (ԳՄՀԸ)
16. Սիրանույշ Գալստյան – Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (ԳՄՀԸ)
17. Իրինա Բալասյան – Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (ԳՄՀԸ)

Աշխատաժողովին մասնակցեցին ՀՀ Էկոնոմիկայի, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների և Շրջակա միջավայրի նախարարությունների, ոլորտում գործող պետական, միջազգային, հասարակական և գիտական հաստատությունների ներկայացուցիչներ:

Յոթերորդ աշխատաժողովի ընթացքում՝

- ներկայացվեց ու քննարկվեց «ՀՀ արոտների կայուն կառավարման հայեցակարգի» ներկա կարգավիճակը և դրա հետ կապված հետագա քայլերը,
- ներկայացվեց ու քննարկվեց Հարթակի 2020թ Աշխատանքային պլանը,
- ներկայացվեց ԳՄՀԸ-ի կողմից մշակված «Դեգրադացված բնական կերհանդակների բարելավման ուղեցույց»-ը:

Միջոցառման սկզբում Հարթակի անունից մասնակիցներին ողջունեց ԳՄՀԸ բնապահպանական ծրագրի ներկայացուցիչ Աստղիկ Դանիելյանը՝ ներկայացնելով հանդիպման առցանց վարման կարգը, միջոցառման օրակարգը և աշխատաժողովի նպատակը:

Հաջորդիվ, մասնակիցներին ողջունեցին և արդյունավետ աշխատանք մաղթեցին ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Տեղական ինքնակառավարման (ՏԻ) քաղաքականության վարչության պետ Աշոտ Գիլոյանը և ՀՀ Էկոնոմիկայի նախարարության Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման վարչության ՀԳՌԿՄ-2 ծրագրի ղեկավար Դավիթ Մեժլումյանը: Խոսնակները կարևորեցին Հարթակի գործունեությունը՝ մատնանշելով հատկապես Արոտների կայուն կառավարման հայեցակարգի ուղղությամբ տարվող աշխատանքները:



Կարեն Թորոսյանը (ԷՆ, ՀԳՌԿՄ-2) ներկայացրեց «ՀՀ Արոտների կայուն կառավարման հայեցակարգի» ներկա կարգավիճակը և դրա առաջմղման հետ կապված նախատեսվող քայլերը: Ներկայացումից հետո համապատասխան պետական գերատեսչությունների ներկայացուցիչները հնչեցրեցին իրենց առաջարկությունները և մոտեցումը հետագա քայլերի վերաբերյալ:

Վիկտորյա Այվազյանը (ՌԶԳ ՀԿ) ներկայացրեց Հարթակի 2020թ աշխատանքային պլանը, որի շրջանակում նախատեսվում է շարունակել աշխատաժողովների կազմակերպումը, ինչը յուրօրինակ հարթակ է ոլորտում իրականացվող ծրագրերի, դրանց հաջողված փորձի և քաղված դասերի ներկայացման և համակարգման համար: Ընթացիկ տարում նախատեսված են նաև հայեցակարգից բխող գործողություններ, ինչպես նաև Հարթակի կայքի ստեղծում:

Աշխատանքային պլանի վերաբերյալ հնչեցին առաջարկներ, տեղի ունեցավ քննարկում և հարցուպատասխան:



Բնական ռեսուրսների կառավարման փորձագետ Գագիկ Թովմասյանը (ՀԱԱՀ) ներկայացրեց ԳՄՀԸ կողմից աջակցվող բնապահպանական ծրագրերի շրջանակներում մշակած (հայերեն և անգլերեն) և տպագրված «Դեգրադացված բնական կերհանդակների (արոտավայրերի և խոտհարքների) բարելավման ուղեցույց»-ը, որը նախկինում պատրաստված և գործածության մեջ դրված արոտավայրերի մոնիտորինգի և կառավարման ձեռնարկների հետ միասին, ամբողջացնում է բնական կերհանդակների պահպանման և կայուն կառավարման կազմակերպման գործառույթները: Բարելավման ձեռնարկի մեթոդաբանությունն արդեն իսկ կիրառվում է ոլորտում գործող կազմակերպությունների կողմից՝ դեգրադացված արոտավայրերի և խոտհարքների բարելավման աշխատանքներում:

Աստղիկ Դանիելյանն (ԳՄՀԸ) ավելացրեց, որ հայերենով և անգլերենով թողարկված «Դեգրադացված բնական արոտավայրերի (արոտավայրեր և խոտհարքներ) բարելավման ձեռնարկը» էլեկտրոնային տարբերակով հասանելի կլինի գործընկեր նախարարությունների և ԷԿՈսերվ ծրագրի կայքերում, ինչպես նաև թղթային տարբերակով կտրամադրվի շահառուներին, ներառյալ՝ տեղական համայնքներին և ուսումնական հաստատություններին:



Հանդիպման արդյունքում վերհանվեցին և ձեռք բերվեցին հետևյալ առաջարկությունները և համաձայնությունները՝

Առաջարկություններ, հանձնարարականներ, եզրակացություններ

Թեմա	Առաջարկություններ և ձեռք բերված համաձայնություններ, եզրակացություններ
«ՀՀ արոտների կայուն կառավարման հայեցակարգի» ներկա կարգավիճակը և դրա հետ կապված հետագա քայլերը	Համաձայնեցված քայլեր. • Համաձայն Դ. Մեժլումյանի առաջարկի հանդիպել ԷՆ համապատասխան ստորաբաժանումների հետ, ում վերապահված է զբաղվել հայեցակարգի վերաբերյալ հետագա աշխատանքներով և համաձայնեցնել անհրաժեշտ քայլերը հայեցակարգի առաջմղման ուղղությամբ, ինչպես նաև Դ. Մեժլումյանը աշխատաժողովի արդյունները կքննարկի Ա. Խոջոյանի հետ: • Ա. Գիլոյանը առաջարկեց առաջ գնալ ըստ առկա պետական ընթացակարգի:
Հարթակի 2020թ աշխատանքային պլանի	• Պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ աշխատանքային

ներկայացում և քննարկում	պլանը պետք է ներառի ակնկալվող արդյունքներ այնպես, ինչը կբարձրացնի աշխատանքների արդյունավետությունը: • Համայնքներում արոտի կառավարման ինստիտուցիոնալ շրջանակի հետ կապված գործողությունները կքննարկվեն և կիրականացվեն ՏԿԵՆ հետ սերտ համագործակցությամբ: • Հանդիպում կկազմակերպվի ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ՝ համատեղ քննարկելու նախաձեռնված գործողությունները, Արոտավայրերի կառավարման հայեցակարգից բխող՝ համայնքներում արոտավայրերի կառավարման ինստիտուցիոնալ շրջանակի վերաբերյալ:
«Դեգրադացված բնական կերհանդակների բարելավման ուղեցույց»-ի ներկայացում	• Հայերենով և անգլերենով թողարկված ուղեցույցը էլեկտրոնային տարբերակով հասանելի կլինի գործընկեր նախարարությունների և ԷԿՈսերվ ծրագրի կայքերում, ինչպես նաև թղթային տարբերակով կտրամադրվի շահառուներին, ներառյալ՝ տեղական համայնքներին, ուսումնական հաստատություններին և այլն:
Այլ	• Հաշվի առնելով առցանց կազմակերպման հնարավորությունները՝ Ա. Գիլոյանն առաջարկեց ավելի հաճախ կազմակերպել աշխատաժողովներ, անհրաժեշտության դեպքում նաև քննարկումներ ավելի փոքր թիմերով:

Աշխատաժողովի ավարտին ամփոփիչ խոսքով հանդես եկավ Աստղիկ Դանիելյանը (ԳՄՀԸ), ով ամփոփեց քննարկման արդյունքները, հանդիպման ընթացքում ձեռք բերված համաձայնությունները և շնորհակալություն հայտնեց բոլորին արդյունավետ քննարկման համար:

Համակարգման հարթակի յոթերորդ աշխատաժողովի վերաբերյալ անդրադարձ է հրապարակվել ՀՀ Էկոնոմիկայի նախարարության պաշտոնական էջում՝ https://mineconomy.am/news/2060 և Ռազմավարական Զարգացման Գործակալություն ՀԿ-ի կայքում՝ https://sda.am/index.php?id=89&L=2: